

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ք. Արմավիր

«Ք» Արմավիրի մարզային քննչական վարչության «ԿԳ» քննիչ, արդարադատության 3-րդ դասի խորհրդական Բ. Կիրակոսյան, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննվող թիվ 65101718 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հեղինե Գազիկի Սարգսյանը կատարել է հայերենից վրացերեն և հակառակը բանավոր թարգմանություն 2 ժամ տևողությամբ:

Վարչության «ԿԳ» քննիչ,
արդարադատության երրորդ դասի
խորհրդական՝

hbn. 077-11-08-78



Բ. Կիրակոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

30 հուլիսի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ.Բավեյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 13855818 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի հունիսի 10-ին ժամը 17:30-ին հաղորդում է տվել Հարություն Գետրոզի Դարբազյանը, որ նույն օրը ժամը 15:30-ի սահմաններում Երևան քաղաքի Մաշտոցի 39 հասցեում գործող մեքենային խանութի բանջարեղենի բաժնի արկղերից մեկի վրայից անհայտ անձը գաղտնի հափշտակել է իր Սամսունգ տեսակի բջջային հեռախոսը՝ պատճառելով մոտ 170.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2018 թվականի հուլիսի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13855818 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Հ.Դարբազյանը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Վահագն Մերուժանի Ղազարյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 13855818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Վահագն Մերուժանի Ղազարյանին:
2. Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ.Մ.Բավեյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Վ.Ղազարյանին

«30» 07 2018թ.


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

13.03.2019թ.

ք.Երևան

Տրվում է «ՎԻԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի բարգմանիչ Վահագն Մերուժանի Ղազարյանին, առ այն, որ նա ՀՀ բննչական կոմիտեի Երևան քաղաքի ԲՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների բննչական բաժնում քննվող թիվ 13855818 քրեական գործով կատարել է 1 ժամ 40 րոպե բանափոր բարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

Ավագ քննիչ՝



Վ.Մ.ՎԱԿԵՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

«05»-ը հունիսի 2018թ.

ք. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Յու. Օսիպյանս, քննարկելով թիվ 44159718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2018 թվականի ապրիլի 20-ին Արարատի մարզի դատախազությունից թիվ 59-Գ/112-18 գրությամբ ոստիկանության Մասիսի բաժին ստացվել է Արարատի մարզի Հովտաշատ համայնքի Բաղրամյան փողոցի 42-րդ տան բնակիչ Ստեփան Միխայիլի Խաչիկյանի դիմումն այն մասին, որ Արարատի մարզի Հովտաշատ գյուղի Բաղրամյան փողոցի 42-րդ հասցեում գտնվող 0,20 հա չափի հողամասը /սեփականության վկայական 2473790, տրված 11.03.2009թ. անշարժ գույքի կադաստրի Մասիսի ստորաբաժանման կողմից/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Ստեփան Միխայիլի Խաչիկյանին, որը վերջինս 1988թ. գնել է Սուլթանով Հուսեյին Ալաշրաֆ Օղլիից:

25.04.2018թ. Ստեփան Միխայիլի Խաչիկյանը հաղորդում է տվել ոստիկանության Մասիսի բաժնում այն մասին, որ Արարատի մարզի Հովտաշատ գյուղի Բաղրամյան փողոցի 42-րդ հասցեում գտնվող բնակելի տունը և հողամասը համասեփականության իրավունքով պատկանում է իրեն, սակայն նույն իրեն պատկանող հողամասի որոշ մասը, փաստաթղթային կեղծիք կատարելով, տրվել է իր անմիջական հարևան Ահարոն Եղյանին, որը դրա վերաբերյալ ձեռք է բերել սեփականության վկայական: Այդ պատճառով ինքը բողոքում է:

Դեպքի առթիվ 2018 թվականի ապրիլի 30-ին ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 44159718 քրեական գործը:

05.05.2018թ. թիվ 44159718 քրեական գործը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին և հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Ստեփան Միխայիլի Խաչիկյանին, սակայն պարզվել է, որ վերջինս հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտություն է առաջացել նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ մասնակից դարձնել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից, ռուսերեն լեզվի Թարգմանիչ Մարտինա Մարտինի Մակարյանին /անձնագիր AN 0743937, ՀՀ քաղաքացի, հաշվառված է ՀՀ, Մասիս 3-րդ թաղ., 3-րդ 2., 16-րդ բն./, ով տիրապետում է ռուսերեն ու հայերեն գրավոր լեզվին:


Նկատի ունենալով վերոգրյալը և այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով», ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի ՝

1. Թիվ 44159718 քրեական գործով վկա Ստեփան Միխայիլի Խաչիկյանի հարցաքննությանը որպես ռուսաց լեզվի թարգմանիչ մասնակից դարձնել Մարտինա Մարտինի Մակարյանին:

2. Մարտինա Մարտինի Մակարյանին պարգաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


Քննիչ՝



Ա. Յու. Օսիպյան

Որոշմանը ծանոթացա, պարգաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝




Մ. Մ. Մակարյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Մասիս

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ս. Անդրեասյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ քննված թիվ 44159718 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «ՎԻ Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Մարտինա Մակարյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 4 ժամ 30 րոպե տևողությամբ և նույն ընկերության թարգմանիչ՝ Վահագն Ղազարյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 14 ժամ 40 րոպե տևողությամբ:

Բաժնի պետ, արդարադատության առաջին
դասի խորհրդական՝



Ս.Ս. Անդրեասյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով քարգմանիչ ներգրավելու մասին

04 հունիսի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ.Բավեյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 15179718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի հունիսի 8 ոստիկանության Կենտրոնական բաժնում ահազանգ է ստացվել Թերեզա Յուրիի Հակոբջանյանից այն մասի, որ իր բնակարանից գողություն է կատարվել:

Թ.Հակոբջանյանը բացատրությամբ հայտնել է, որ 22.05.2018թ-ից մինչև 29.05.2018 թվականը ընկած ժամանակահատվածն անհայտ անձը Երևան քաղաքի Բրյուսով փողոցի 38 շենքի թիվ 1 բնակարանի ննջասենյակի մահճակալի տակից գողացել է 500 ԱՄՆ դոլլար գումար:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2018 թվականի հունիսի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1,1 կետով հարուցվել է թիվ 15179718 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Թերեզա Յուրիի Հակոբջանյանը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի քարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 15179718 քրեական գործով որպես քարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի քարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին/ AN 0745803/:
2. Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված քարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ.Մ.Բավեյան

Ծանոթացա քարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

« 07 »  Ա.Հարությունյան
2018թ.


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Թ

25.03.2019թ.

ք.Երևան

Տրվում է «ՎԻՉՐՈՒՊ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին առ այն, որ նա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի ԲՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 15179718 քրեական գործով կատարել է 3 ժամ քանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ



Վ.Ա.ԱՎԱԿԵՅԱՆ

Որոշում
թարգմանիչ ճանաչելու մասին

22-րդ օգոստոսի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հարկապես կարևոր գործերի քննության վարչության ՀԿԳ քննիչ Կ.Գ.Համբարձումյանս, քննարկելով թիվ 90956816 քրեական գործի նյութերը.

Պարզեցի

Սրեփանակերտի ՌՌ բաժնի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՊԲ դաշտային պահեստների կառուցման ընթացքում համապարասխան պաշտոնապար անձինք պարզվիրաբուին խաբելու և նրա վարահոությունը չարաշահելու եղանակով փեղադրել են հրդեհի ահազանգման ցածրորակ համակարգ, կատարվել են ցածրորակ շինարարական աշխատանքներ, այն է՝ փեղադրելուց երկու օր անց շարքից դուրս է եկել և 2014 թվականի դեկտեմբեր ամսից մինչ այսօր շահագործման պիտանի չէ 6.736.000 ՀՀ դրամ արժողությամբ հրդեհի ահազանգման համակարգը, բացի այդ նույնաման պահեստների կառուցման համար նախատեսված և ՊԲ-ի կողմից հարկացված գումարի փախստուները կազմում է 4.805.400 ՀՀ դրամ, ծածկոցային պահեստներում առկա են գեղնաջրեր, պահեստանոցների անվտանգության համար նախատեսված հողածածկոցները փլուզված են, իսկ ՊԲ հրամանապարի 12.12.2014թ. N 474 հրամանով սրեղծված «ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի» համապարասխան պաշտոնապար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականություններն անփույթ կատարելու հետևանքով նշված խախտումները չեն արձանագրվել, դաշտային պահեստների շինություններն ընդունվել են շահագործման, դրանով իսկ ծանր հետևանքներ են պատճառել զինվորական ծառայության շահերին և պաշտոնապար անձանց կողմից ծառայողական գործառույթների իրականացված հատարված կարգին:

Դեպքի առթիվ, 01.04.2016թ. ՀՀ ՔԿ ԶԶԳՎ առաջին կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 376-րդ հոդվածի 2-րդ մասի հարկանիշներով հարուցվել է թիվ 90956816 քրեական գործ և, նախաքննությունը շարունակելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ ԶԶԳՎ ՀԿԳ քննության վարչությունում:

2017 թվականի հունիսի 16-ին թիվ 90956816 քրեական գործի նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել գննության ենթարկել շինարարական աշխատանքների ընթացքում ոռոսաց լեզվով կազմված կատարողական ակտերը:

Նկարի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը փարվում է հայերեն, իսկ փվյալ դեպքում կատարվելիք քննչական գործողության պարշաճ դատավարական ընթացակարգն ապահովելու համար անհրաժեշտ է ոռոսաց լեզվի թարգմանչի մասնակցությունը, ուսրի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով:

Որոշեցի

1. Արինե Հայկի Հարությունյանին /ծնված 04.12.1954թ. ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, աշխատում է „Վի Գրուպ,, ՍՊ ընկերությունում, որպես ռուսաց լեզվի թարգմանիչ, բնակվում է ք. Երևան, փ. Սևասրուպոյան, տուն 20/2 հասցեում, փրիսապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին, գործով չչահագրգռված անձ է/ ճանաչել որպես թարգմանիչ:

2.Որոշման մասին հայտնել թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին:

ՀԿԳ քննիչ



Կ. Գ. Համբարձումյան

Որոշման մասին ինձ հայտնվել է 22.08.2017թ.: Միաժամանակ ինձ պարզարանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանիչի պարտականություններն ու իրավունքները:

Միաժամանակ ինձ հայտնվել է ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պարասխանաարվության մասին:

Գործով անցնող անձանց հետ փրիսապետությունների մասին Ա.Հ.Հարությունյանը հայտնեց ֆրեզեյա Գործի և առեղծոց

Ծարգկանայ չե՞ծ Թանաչա՞ծ:

Թարգմանիչ՝



Ա.Հ.Հարությունյան

ՀԿԳ քննիչ



Կ. Գ. Համբարձումյան


Տեղեկանք

21.12.2018թ.

ք. Երևան

Հայտնում եմ, որ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում քննվող թիվ 90956816 քրեական գործով, որպես թարգմանիչ ներգրավված „Վի Գրուպ“, ՄՊ ընկերության աշխատակից Արինե Հայկի Հարությանի մասնակցությունը սույն քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացված քննչական գործողություններին կազմում է ընդհանուր 21 ժամ 10 րոպե:

Ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ՝



Կ. Գ. Համբարձումյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

07.03.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության գնդապետ Ա.Բարայան, վերանայելով վարույթում քննվող թիվ 90050617 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Թիվ 90050617 քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել քաղաքացիներ՝ Արմեն Արամայիսի Առաքելյանին և Նարեկ Արմենի Առաքելյանին, սակայն վերջիններս չեն տիրապետում դատավարության լեզվին՝ հայերեն կարդալ ու գրել չգիտեն, ունեն ոռուսական կրթություն, ուստի անհրաժեշտ է թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացիներ՝ Արմեն Արամայիսի Առաքելյանի և Նարեկ Արմենի Առաքելյանի սույն գործով որպես վկա հարցաքննությանը մասնակցելու և թարգմանություն կատարելու համար հրավիրել << Վի Գրուպ >> ՍՊ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանին:

2. Թարգմանիչ Արինե Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության գնդապետ

Ա.Բարայան

Որոշման հետ ծանոթացա, պատճենը ստացա՝ <<07>> ----- 03 ----- 2018թ., միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացված եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ա.Հարությունյան

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության գնդապետ

Ա.Բարայան

ՏԵՂԵԿԱՆԵՐ

19.03.2018թ.

ք.Երևան

Մույն տեղեկանքը տրվում է << Վի Գրուպ >> ՍՊ ընկերությանը, առ այն մասին, որ նույն ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանը, ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում քննվող թիվ 90050617 քրեական գործով, 07.03.2018թ-ին ժամը 12:45-ից մինչև 14:20-ը, ինչպես նաև՝ 15.03.2018թ-ին ժամը 10:55-ից մինչև 12:15-ը, ընկած ժամանակահատվածում կատարել է թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և հակառակը:

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ
արդարադատության գնդապետ



Ա.Բարայան

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

19.03.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության գնդապետ Ա.Բարայանս, վերանայելով վարույթունս քննվող թիվ 90050617 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Թիվ 90051217 քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել ՀՀ ՊՆ 14203 գործառնախի ծառայող՝ Վլադիմիր Ռաչիկի Զարգարյանին, սակայն վերջինս չի տիրապետում դատավարության լեզվին՝ հայերեն կարդալ ու գրել չգիտի, ունի ռուսական կրթություն, ուստի անհրաժեշտ է թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՊՆ 14203 գործառնախի ծառայող՝ Վլադիմիր Ռաչիկի Զարգարյանի սույն գործով որպես վկա հարցաքննությանը մասնակցելու և թարգմանություն կատարելու համար հրավիրել << Վի Գրուպ >> ՍՊ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանին:

2. Թարգմանիչ Արինե Հարությունյանին պարգարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության գնդապետ



Ա.Բարայան

Որոշման հետ ծանոթացա, պատճենը ստացա՝ <<19>> 03 2018թ., միաժամանակ ինձ պարգարանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացված եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Հարությունյան

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության գնդապետ



Ա.Բարայան

ՏԵՂԵԿԱՆՔ

19.03.2018թ.

ք.Երևան

Սույն տեղեկանքը տրվում է << Վի Գրուպ >> ՍՊ ընկերությանը, առ այն մասին, որ նույն ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանը, ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում քննվող թիվ 90051217 քրեական գործով, 19.03.2018թ-ին ժամը 11:20-ից մինչև 12:05-ը ընկած ժամանակահատվածում կատարել է թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և հակառակը:

ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության գնդապետ



Ա.Բարայան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«15» հունվարի 2018թ.

ք.Երևան

«Վ» քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Տոնոյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 14952218 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի նոյեմբերի 26-ին Ջասվինդեր Հարդիվ Սինգհը «Ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Սեպուհ 20 հասցեում Մանինդեր Գուրմիտ Սինգհը իրեն աշխատանքի տեղավորելու և կացության քարտ ձևակերպելու պատրվակով խաբեությամբ և իր վստահությունը չարաշահելու եղանակով իրենից մաս-մաս ընդհանուր առմամբ պահանջել և ստացել է խոշոր չափերով՝ 1.932.000 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար գումար, այդ կերպ կատարելով խարդախություն:

Դեպքի առթիվ 2018 թվականի դեկտեմբերի 06-ին «Ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 14952218 քրեական գործը:


Քննությամբ պարզվել է, որ դատավարական մասնակիցները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին և տիրապետում են հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ դատավարական մասնակիցները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, իսկ Մանիկ Աչարյան ազատորեն տիրապետում է հնդկերեն և հայերեն գրավոր և բանավոր լեզվին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 14952218 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին ներգրավվել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ս.Տոնոյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Մ.Աչարյա

ՏԵՂԵԿԱԼՔ

« Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս. Տոնոյանս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին , որ վարույթումս քննվող թիվ 14952218 քրեական գործով <Վի Գրուպ ՍՊԸ> ընկերության կողմից լիազորված հնդկերեն լեզվի թարգմանչուհի Մանիկ Հենրիկի Աչարյան կատարել է բանավոր թարգմանություն հնդկերենից հայերեն և հակառակը ընդհանուր 7 ժամ 15 րոպե թարգմանություն :

**« ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական
շրջանների քննչական բաժնի քննիչ՝**



S.Տոնոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

28 հունիսի 2018թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ առաջին դասի խորհրդական Աննա Արամի Բարսեղյանս, քննարկելով «Նոստիկանության Շենգավիթի բաժնից ստացված թիվ 11182818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

04.06.2018թ. Արտյոմ Նազարեթյանը նոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2018 թվականի մայիսի 2-ին՝ ժամը 16:20-ի սահմաններում, անհայտ անձը իր անչափահաս դստերը տարել է Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 49 շենքի մուտք, որտեղ վերջինիս հանդեպ կատարել է անառակաբարո գործողություններ:

Դեպքի առթիվ 2018 թվականի հունիսի 6-ին «Նոստիկանության ԵԲՎ Շենգավիթի բաժնում «Քրեական օրենսգրքի 142 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 11182818 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վկա Նատալյա Միխայելի Ֆենիչի չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, տիրապետում են միայն ռուսերեն գրավոր և բանավոր լեզվի, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանիչ՝ Նատալյա Միխայելի Ֆենիչի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15,55 և 83 հոդվածներով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 11161817 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել 'Վի Գրուպ' ՍՊԸ-ի ռուսերենի լիազոր թարգման Արփինե Հարությունյան /անձնագիր՝

AN0745803/, որը ստացել է ռուսերեն լեզվից թարգմանչի համապատասխան որակավորում:

2. Արփինե Հարությունյանին պարգաբանել ՀՀ ՔԴՕ 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր.օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ա.Ա.Բաքսեդյան

Ծանոթացա թարգմանչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Միլիցիա Հարությունյան

29.

06

2018թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է այն մասին, որ «Վի Գրուպ» ընկերության թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11182818 քրեական գործով 29.06.2018 թվականին՝ 1 ժամ 30 րոպե տևողությամբ կատարել է գրավոր և բանավոր թարգմանություն ուսերենից հայերեն և հակառակը:

Քննիչ՝



Ա.Ա.Բարսեղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

02/08/2018

Վաղարշապատ

ՀՀ քննչական կոմիտեի ՀՀ Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Վարդան Մազյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 57161818 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

„Ավենտուա,, ՍՊԸ-ի տնօրեն՝ Հերիքնազ Էդիկի Ակունցը, ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ Արմավիր-Երևան 26 հասցեում գտնվող „Զվարթնոց,, հյուրանոցառեստորանային համալիրը վարձակալական հիմունքներով տրամադրել են Սաֆար Բաղերի Մուսավիին, որի ընթացքում պարզվել է, որ 2018թ հունվարի 04-ից մինչև 2018թ մարտի 01-ն ընկած ժամանակահատվածում „Զվարթնոց,, հյուրանոցառեստորանային համալիրից գողացել են 20 հատ աթոռներ, 15 հատ սփռոցներ, 12 հատ մրգի մեծ վազեր, 120 հատ բաժակներ, 60 հատ ափսեններ, 2 հատ ամառային բազմոցներ և հեռացել, „Ավենտուա,, ՍՊԸ-ին ընդհանուր պատճառելով 1.500.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ 23.04.2018թ-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 57161818 քրեական գործը, և ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին և ընդունվել է վարույթ:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն և դրա ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է, իսկ քրեական գործով Սաֆար Մուսավի Շամին չի տիրապետում հայերենին և նրան անհրաժեշտ է պարսկերենին տիրապետող թարգմանիչ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով, 83-րդ հոդվածով և 101-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քրեական գործով Սաֆար Մուսավի Շամիի համար հայերենից պարսկերեն ու պարսկերենից հայերեն թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել և վարույթին մասնակից դարձնել Հրանուշ Մկրտիչի Թախմասյան՝ „Վի Գրուպ,, ՍՊԸ թարգմանիչ՝ արևելյան լեզուների բարձրագույն կրթությամբ:
2. Որոշման մասին հայտնել թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին, նրան պարզաբանել թարգմանչի իրավունքները ու պարտականությունները և նախազգուշացնել թարգմանչի պարտականությունները չկատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

քննիչ

Վարդան Մազյան

Ծանոթացա որոշմանը: Քննիչի կողմից պարզաբանվել են թարգմանչի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Հրանուշ Թախմասյան

02/08/2018

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ


31.01.2019թ.

ք. Վաղարշապատ

Ես՝ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի տեղակալ Վ.Բազունցս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին, որ թիվ 57161818 քրեական գործի նախաքննության ընթացքում „Վի Գրում,, ՍՊԸ-ի կողմից տրամադրված լիազորագրի հիման վրա հիշյալ ընկերության ներկայացուցիչ Հրանտ Մկրտիչի Թախմասյանը 02.08.2018թ. ժամը 10:05-ից մինչև 12:00-ն մասնակցել է գործով կա Սաֆար Բաղերի Մուսավի Շամի հարցաքննությանը և կատարել պարսկերեն թարգմանություն:

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



Վ.ԲԱԶՈՒՆՍ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 13875418 քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

30.08.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, առաջին դասի խորհրդական Լ.Ս.Ղազարյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 13875418 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հուլիսի 31-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում հաղորդում է տվել Հրաչյա Գևորգի Սաղաթեյանն այն մասին, որ 2016 թվականի մայիս ամսին ընդհանուր 12.400 ԱՄՆ դոլար գումար է տվել Աշոտ Բաբկենի Թադևոսյանին իր համար մինչև 2016 թվականի վերջը հիփոթեքային տարբերակով բնակարան ձեռք բերելու նպատակով, սակայն մինչ օրս բնակարանը ձեռք չի բերել և գումարն էլ չի վերադարձրել:

Փաստի առթիվ առթիվ 08.08.2018 թվականին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 13875418 քրեական գործը, որը 16.08.2018թ.-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում: Նշված քրեական գործով նախաքննության կատարումը 17.08.2018 թվականին հանձնարարվել է ինձ, որը համապատասխան որոշմամբ ընդունվել է վարույթ:

Հ.Գ.Սաղաթեյանը համապատասխան որոշմամբ ճանաչվել է տուժող:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Հրաչյա Գևորգի Սաղաթեյանը ոչ բավարար չափով է տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 13875418 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ից Արինե Հայկի Հարությունյանին:
2. Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախագգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Լ.Ս.Ղազարյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախագգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


_____ Ա. Հարությունյան

« 30 » 08 2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Երևան 0070, Կրացյան փ. 90

<<28>> 09 2018 թ.


№ 13875418

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է <<Վի Գրուպ>> ՍՊԸ թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին (անձնագիր՝ AN0745803, 09.12.2013թ. 001-ի կողմից) առ այն, որ վերջինս համապատասխան որոշման հիման վրա ներգրավված լինելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13875418 քրեական գործով որպես թարգմանիչ, 28.09.2018 թվականի դրությամբ մատուցել է ընդհանուր 5 (հինգ) ժամ տևողությամբ թարգմանչական ծառայություններ:

Քննիչ,

առաջին դասի խորհրդական՝



Լ.Ս. Ղազարյան

ՈՐՈՇՈՒՄ

քրեական գործով թարգման ներգրավելու մասին

09.07.2018թ

ք. Երևան

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Ռ. Սարգսյանս, վարույթումս քննվող թիվ 10188518 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԹԱՇԴՊ վարչության 1-ին բաժնի ՀԿԳ ավագ օպերիվագոր, ոստիկանության մայոր Գ.Երիցյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԹԱՇԴՊ վարչության ծառայողները, համատեղ ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողների հետ իրացնելով ստացված օպերատիվ-հետախուզական տվյալները, մաքսանենգ ճանապարհով ապօրինի ՀՀ թմրամիջոց փոխադրելու, պահելու և իրացնելու կասկածանքով 2018 թվականի հուլիսի 6-ին Երևան քաղաքի Հալաբյան-Արզումանյան փողոցների խաչմերուկից «Նիսան Նոթ» մակնիշի 35 NR 237 հ/հ ավտոմեքենայով ոստիկանության Մաշտոցի բաժին բերման են ենթարկել ԻԻՀ քաղաքացիներ Ալբերտ Համոունի Ալեքսանմուրադյանի, Զաֆար Մոհամմադ Մարեֆաթիին, Կրիկուր Զավենի Մենասախանյանին և նշված ավտոմեքենայի վարորդ, ՀՀ քաղաքացի Հարություն Հրաչի Տերտերյանին:

Ալբերտ Ալեքսանմուրադյանի անձնական խուզարկությամբ վերջինիս մոտ առկա պոլիէթիլենային տոպրակներում հայտնաբերվել է 6 հատ 0.5 լիտր տարողությամբ պլաստմասե տարաներ՝ լցված թափանցիկ հեղուկով, 1 հատ 1 լիտր տարողությամբ պլաստմասե տարա՝ լցված անգույն հեղուկով, 1 հատ 1.5 լիտր տարողությամբ պլաստմասե տարա՝ լցված անգույն հեղուկով և 2 հատ 1 լիտր տարողությամբ պլաստմասե տարաներ՝ լցված մուգ գույն հեղուկով:

Ալբերտ Ալեքսանմուրադյանի հագուստի խուզարկությամբ հայտնաբերվել է թվով 8 փաթեթներ, որոնք փաթեթավորվել են 6 փաթեթներում: 1-ին փաթեթում փաթեթավորվել է դարչնագույն գույնի փոշենման զանգված, որի կշիռը կազմել է փաթեթի հետ մեկտեղ 1.83 գրամ, 2-րդ փաթեթում փաթեթավորվել է 5.17 գրամ ընդհանուր քաշով սպիտակ բյուրեղանման զանգված, 3-րդ փաթեթում փաթեթավորվել է 6.83 գրամ քաշով սև գույնի կոշտ զանգված, 4-րդ փաթեթում փաթեթավորվել է 3.32 գրամ քաշով դեղնականաչավուն մանրացված և չորացված զանգված, 5-րդ փաթեթում փաթեթավորվել է 0.68 գրամ քաշով դեղնականաչավուն մանրացված և չորացված զանգված, իսկ 6-րդ փաթեթում՝ 11.48 գրամ և 15.21 գրամ քաշով դեղնականաչավուն մանրացված և չորացված զանգված:

Ըստ Ալբերտ Ալեքսանմուրադյանի հայտարարության՝ այնուհետև նաև բացատրությամբ, անձնական խուզարկությամբ իր մոտից հայտնաբերված և վերցված զանգվածները հանդիսանում են «Վերոին», «Ափին», «Մարիխուանա» և

<Կրիստալ>> տեսակի թմրամիջոցներ, իսկ 0.5 լիտր տարողությամբ 2 տարաների, ինչպես նաև 1 լիտր տարողությամբ 1 տարայի մեջ լցված է <<Կրիստալի ջուր>>, որոնք 2018 թվականի հուլիսի 6-ին ավտոբուսով ԻԻՀ-ից փոխադրել է << Արսեն Վաչագանի Խաչատրյանի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա վերջինիս իրացնելու նպատակով:

Զաֆար Մարեֆաթի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ապակե տարայով սպիտակ գույն, ընդհանուրը՝ 85.27 գրամ քաշով անգույն, հոտավետ հեղուկ, որը, ըստ Զ.Մարեֆաթի հայտարարության՝ հանդիսանում է <<Մեթադոնի սիրոպ>>: Կրիկուր Զավենի Մենասախանյանի և Հարություն Հրաչի Տերտերյանի անձնական խուզարկությամբ օրենքով արգելված իրեր և առարկաներ չեն հայտնաբերվել:

Նույն օրը նշանակվել է դատաքիմիական փորձաքննություններ և համաձայն փորձագետի թիվ 3898 եզրակացության՝ փորձաքննության ներկայացված ընդհանուր 2.28 գրամ քաշով փոշեբյուրեղային զանգվածը հանդիսանում է <<Մետամֆիտամին>> տեսակի թմրամիջոց:

Փաստի առթիվ 2018 թվականի հուլիսի 06-ին << ոստիկանության Մաշտոցի բաժնում << քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է 10188518 քրեական գործը:

2018 թվականի հուլիսի 06-ին նախաքննություն կատարելու համար 10188518 քրեական գործն ուղարկվել է << ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

2018 թվականի հուլիսի 06-ին << ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետի կողմից որոշում է կայացվել՝ քննչական խումբ ձևավորելու և թիվ 10188518 քրեական գործի նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին:

2018 թվականի հուլիսի 07-ին Կրիկուր Զավենի Մենասախանյանը, Ալբերտ Հոմունի Ալեքսանմոուզեմբարիասլինը և Զաֆառ Մուհամմադի Մարեֆաթին իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու, փոխադրելու և պահելու կասկածանքով ձերբակալվել են:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարելու համապատասխան քննչական և դատավարական գործողություններ քրեական գործով կասկածյալ Զաֆար Մուհամմադի Մարեֆաթի մասնակցությամբ, սակայն չի տիրապետում հայերեն թե՛ բանավոր և թե՛ գրավոր լեզվին, սակայն տիրապետում է պարսկերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով << քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 10188518 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգման Հրանուշ Մկրտչի Թախմասյանին, ով լիազորված է <<

քննչական կոմիտեում լիազորագրի շրջանակներում կատարել բանավոր և գրավոր թարգմանություններ պարսկերեն լեզվից հայերեն և հակառակը:

2. Հրանուշ Մկրտչի Թախմասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝



Ռ. Գ. Սարգսյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:




« 05 » 07 201 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում
քննված թիվ 10188518 քրեական գործով Հրանուշ Թախմասյանը ներգրավվել է
պարսկերեն լեզվով թարգման և նախաքննության ընթացքում 17 ժամ 15 րոպե
կատարել է թարգմանություն հայերեն լեզվից պարսկերեն և հակառակը:

ՀԿԳ քննիչ՝



Ռ. Սարգսյան